նոյնպէս ցամաքային երկիրներ են, Հայաստան, Տաճկաստան, Ասորեստան, Միջագետք։ Երկրի ներսում չկան յիշելու արժանի լճեր և գետեր։ Հարաւում հոսում է բաւական ջրառատ Խուժիստանի Կարուն գետը, ստորին հոսանքում մինչև իսկ նաւագնաց, իսկ հիւսիսում բաւական մեծ է Ռուդբար գետը, որ գոյանում է Գիլանի յորդառատ անձրևներից և համարեա անօգուտ կերպով թափւում է իրեն անուցանող կասպից ծովը։

Էնզելի և Ռեշտ, Գիլանի երկու գլխաւոր քաղաքներից, ցարական իշխանութեան օրով ռուսական ժողովրդական դրամով շինուած չսէն, Ռուդբար գետի հովտով, սկզբում անտառածածկ, ապա լերկ և ժայռոտ ուղիով 40–50 կիլոմետր կտրելով, ճանապարհորդին հասցնում է Պարսկաստանի բարձրագոյր մասերը, Ղազվին քաղաքի չափազանց ընդարձակ դաշտը, որի համեմատաբար փոքր մասն է մշակուած։ Դաշտը նման է մի վիթխարի աւազանի, որի եզերքները կազմում են գանազան բարձրութեամբ լեռներ և բլուրներ, որ շղթաներ կազմելով միմեանց հետ օղականման եզերում են դաշտը։ Այդ պատկերն ու տեսարանը տիպիք է համարեա թէ ամբողջ երկրի համար, դէպի հարաւ և արևելք, տարբերութիւնով շրջանակների մեծ ու փոքր չափերով։ Ամբողջ երկրի մէջ գիւղերն ու քաղաքները գլխաւորապէս օազիսների կերպարանքով են ներկայանում, որովհետև գետեր ու գետակներ չափազանց սակաւաթիւ են. և մշակութիւն տեղի է ունենում միայն առոգման միջոցով, որտեղ որ փոքրաքանակ ինքնահոս ջրեր կան կամ արհեստական ջրապաշար է ստացւում։ Երկարաձիգ գետերի մշակւած տարածութիւններ հազւագիւտ երևոյթ են Պարսկաստանի ընդարձակ տերիտորիայի վրայ։

ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ԱՐՔԵՊՍԿ.

(Շարունակելի) (6)

ԵԿԵՂԵՑԱՊԱՏՄԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԿԵՍԱՐԱՑԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Կեսարացին այն ատեն կ'ըսէ թէ պէտք է որ բոլոր դրսեցիներուն ազդարարել որ գան հաւաքուին և միասին երթանք Տիվան գանգատելու։

Դարանաղցի (էջ 132) կ'ըսէ. «Եւ երկոքինս գրեցաք գիր ողջունի առ ժողովուրդն որ ի գողդակս հին, որ ընթերցեալ ի ձեր ականջս, յորժամ ցուան՝ յոյժ ուրախ եղեն զմիաբանութիւնն մեր, եւ առ ժամայն եկին ի կոչն»։

Գրիգոր Կեսարացի հաւաքուաղ այս բազմութեան «շատ բան ասաց վասն անկարգութեան վարիչներացն»։

Ասիկա փաստ մըն է թէ Գրիգոր Կեսարացին, զոր վէքիլները բերած էին 1607ին, գժտուած էր նաև անոնց հետ և դէմ եւլած անոնց, գիտակցութեամբ Դարանաղցիին։

Դարանաղցի շարունակելով իր խօսքը կ'ըսէ թէ հաւաքուած ժողովուրդը Գրիգոր Կեսարացին լսելէ յետոյ ասացին ամենեքեան, անուսիկ կամ առաջի ձեր եւ ուր որ կու հրամայէք, պատրաստ եմք։ Եւ եղեալ մեր պատրաստեցաք առ ի գնալ, եւ ասացաք իւրն թէ՝ հրամայեա որ երթանք ի միասին։ Նա (Կեսարացին) յոլով անկեալ ասաց. ես չեմ կարողանայր գնալ ընդ ձեզ, զի վազնջուց հետ չեմ գնացեր ի տիւան եւ յայս թագաւորես պարաթ չեմ նորեր. ահա Քոքանիացի Ծաղկոր եպիսկոպոսն եւ Երզնկացի Կարապետ երեցն փոխանակ իմ ընդ ձեզ»։

Հոս իրողութիւն մը երևան կու գայ, որ չափազանց կարևոր է թէ՛ Կ. Պոլսոյ պատրիարքաց պատմութեան և թէ՛ Գրիգոր Կեսարացիի կենսագրութեան տեսա-

կէտով։ Ինչպէս կը տեսնուի այս խօսքերէն, իսկական իշխանութիւնը 1605ին անցած էր աշխարհական վէքիլներու ձեռքը և Գրիգոր Կեսարացի ճանչցուած պատրիարք մը չէր։ Վէքիլները գայն բերած էին Կ. Պոլսոյ մէջ տիրող բեկեներու և եկեղեցիներու մէջ ծագած վէճերը իր հեղինակութեամբ կարգադրելու համար, և Գր. վրդ. Կեսարացի, հաւատարիմ իր առ Ամթեցիս գրած թուղթին մէջ ըսածին, չէր ընդունած պատրիարքութիւնը և իբր պատրիարք կը գործէր՝ պարզապէս վէքիլներու հրահանգով և նոր պէրաթ չէր առած, վասնզի, ինչպէս տեսնուեցաւ, որոշած էր Կ. Պոլիս չմնալ և խաղաղարարի իր պաշտօնը կատարելէ յետոյ երթալ Ամիթ և այն տեղ մխիթարել ժողովուրդը։

Թերևս ասիկա Նաեւ պատճառներէն մէկն է որ երկար ատեն կը վարանի ուղղակի տեղակալներուն հետ մաքառելու, և զանոնք սիրաշահելու փորձեր կ'ընէ, ինչ որ Դարանաղցի յանիրաւի ի չարն կը մեկնէ և անոր դէմ ամբաստանութեան նիւթ կը դարձնէ։

Այս կը կազմէ իր տկար կողմը, որ ահա այս պարագային բոլորովին երևան կու գայ և արդեւք կ'ըլլայ իբր պատրիարք իր ժողովուրդին հետ ներկայանալուն Դիւան։ Ուստի կը յանձնարարէ երկու ուրիշ եկեղեցականներ։ Ասիկա նշանակելի իրողութիւն մըն է, որ պէտք է նկատի ունենալ։

Շարունակութեան մէջ ալ կը շեշտուի Հայոց անգլուխ մնացած ըլլալը, «գլխաւոր և առաջնորդ», այսինքն հոգևոր պետ մը չունենալը, ինչ որ ոչ նուազ նշանակելի է։

Դարանաղցի կը նկարագրէ թէ այս պատճառով ժողովուրդը ինչպէս գանգատեցաւ Տիւանին մէջ։ «Եթէ եղնայ թագաւոր մը հանայիւ եւ ժողովրդոյ զանգատ առնել ի ձեռաց ամբարտաւան Մղայիմ Սաֆինեցուցն թէ՝ ամենայն միլլաթ գլխաւոր եւ առաջնորդ ունի, եւ իւրեանց առաջնորդին հրամանաց դուրս չեն ելներ, բան զիրեական ազգն աւարգ կան ոչ, նոքա իւրեանց խախամին հնազանդ են։ Մեր յանանպի ամենաթ կան, մեկ բանի ունենք զգուխարաց դարիպ հանայոյ եւ ժողովուրդ կու չարչարեն, յեկեղեցոյ կու վարեն թէ՝ մեր մուլքն է եկեղեցիին։ Մենք կ'ասենք թէ՝ մենք այլ թագաւորին ընտանի ենք եւ այս եկեղեցիս այլ թագաւորին օժիտն է եւ պատիչն։ Մեզ այս ցեղ ենդութիւն կու հաստատանին ի քո աւուրն։ Այսպես բողոքեցաւ առաջի ամենայն նախարարացն Սուլթան Մուրատին (1) եւ ամենայն մեծամեծաց նորա։ Եւ յայտ մեծ մանչուրն (2), որ իւրեանին ահենամա (3) ասեն, ի ձեռանէրս ունելով եւ գրեալ հաք ի մէջ արգուհաղին (4) զորպիտութիւն նորա, եւ յորժամ որ ընթերցան զարգուհալն, խնդրեցին գանանչուրն եւ հանեալ տուաք ի նոսա եւ առեալ վերծանեցին եւ յոյժ սիրով ընդունեցին եւ համբուրեցին ամենեքեան վագիրնին եւ ետուն առ մեզ։ Եւ մեկ հրամանաց գիր ետուն, որ պոյուրտում ասեն եւ մեկ չապուշ գնին մեր ուղարկելով առ մեծ դատաւորն ամենայն Ըստամբոյայ, զի ուղղութամբ դատ արասցէ մեզ ընդ ոստիքից մերոց։ Եւ մեր եղեալ անցի գնացաք առ դատաւորն եւ երկու մարդ գնացին հետ ոստիկանին զոտնինին եւ գնեղիչին ի քարեղ, որ գրուխ չարեցան Նազարէթն էր եւ Գոսա Եաղուպչանն եւ այլ ունենք ընկերք նոցա։ Եւ յորժամ եկան կացին յանդիման դատաւորին, դատաւորն հարց. «Ո՞ր փափազ են որ դոքա ծեծեր են։ Եկին ունենք ի քանանայից. մեր եմ, որ այդ կարմահասակ մարդդ՝ Նազարէթ ասեն՝ դա գան հար մեզ եւ վարեց յեկեղեցոյն եւ կ'ասէ թէ ամենայն եկեղեցիք մեր հայրենիք են, մեզ չենք թողուր։»

Նազարէթ կ'ուրանայ և դատաւորին կու տայ սա նշանակելի բացատրութիւնները. «Ես այսչափ մարդ կուտանք թագաւորին ի տարոյն, նա դոքա զծողովուրդն զայս կ'ենեն (գրաւել) եւ մեզ եարտում (օգնութիւն) չեն տար։ աշխարհն ամեն ատիրեցան, մարդն ի հոս

(1) Դարանաղցի յիշողութեան վրէպով մը Սուլթան Մուրատի անունը կու տայ. վասնզի 1608ին գահուն վրայ էր Սուլթան Ահմէտ Ա. (1603-1617)։

Սուլթան Մուրատ Գ. (1574-1595) շատոնց մեռած էր եւ Սուլթան Մուրատ Դ. (1622-1640) շատ ուշ պիտի գահակալէր։

Կեսարացի որ առաջին անգամ պատրիարք եղած էր 1601ին Սուլթան Մէհէմմէտ Գ.ի (1595-1603) ատեն, երբ կ'ըսէ թէ «այս թագաւորէն պարտք չեմ նորեր» անշուշտ կ'ակնարկէ Սուլթան Ահմէտ Ա.ի, որ 1603ին գահակալած էր. իր Կեսարիայէն երկրորդ անգամ գալէն (1607) առաջ։

(2) Ցալէ մանչուր (Մանչուրը Ալի) կը նշանակէ բարձրագոյն հրովարտակ։

(3) Այսինքն՝ պայմանագիր։

(4) Այսինքն՝ խնդրագիր։

ի, դոխա մեկ փող չեմ իջար, մեր ուսի՞ց վճարեմ զդպրապան. մեզ այլ զուշմ է։»

Այսպէս ասուս բազումս յոյնովի» դատաւորը խարել կը փորձէ, հակառակ ասոր որ «քահանայիցն շոկ հաց անգամ չեմն թողուր ջաւրեզ» և մկրտութիւններէն 300 դրամ, պսակներէն երկու ֆլորի և մեռելներէն 4-5 զրուշ կ'առնէին և «այլ անթիւ յաղչսակութիւնս կ'ընէին։

Ասոնք ամէնը ուրացան։

Դարանաղցին այն ատեն առաջ կ'անցնի և Բ. Դուռնէն ստացած պույրուլտուն կուտայ և դատաւորը կարդալէ յետոյ՝ կը պահանջէ «ահեցնամեն», և այն ատեն դատաւորը կը սկսի քաղցրութեամբ խօսիլ և Դարանաղցին կը հասկցնէ դատաւորին մի առ մի «ի սկզբանէ ի վեր . . . աղեսն թշուառութեանց եւ զնոցա չարութեան արարսն եւ զգործս բազմադիմի նենգչացն, որով նենգեին եւ ստամսկցուցանեին . . . եւ զողոմեալի, վշտաց, աղխաս եւ տնանկ խահանային եւ ժողովուրդն» (Դարանաղչ, էջ 134)։

Նազարէթն՝ կ'ըսէ Դարանաղցի «չեզու յերկարեց ինձ եւ սկսաւ արհամարհել եւ անարգել զմեզ առաջի դատաւորին։ Եւ չուտ դատաւորն զոգորեցն ընդ իս, ցասմամբ եկաց ի վերայ ծնկացն եւ հրամայեաց զան հարկանել եւ ի բանս արկանել» (Նոյն)։

Սակայն Դարանաղցի և իր ընկերները կը խնդրեն որ չծեծուի և միայն դատաստան կը պահանջեն։

Դատաւորը այն ատեն այդ վէճերներուն կը հարցնէ «քաֆիրնի՞», ղուշ Սուլթան Մոհամմեդին Աղիրտանի թերած սուրկուն չէ՞, զայդ ի՞ինանիդ ի հոռմեն եւ մեզ օժիտ արար։ մեր մուլքն (1) ուսի՞ց է, որ զայդ փուխարաներդ կու նենդացնիք. իգրապ եւ ճաֆայ (2) կ'ենիք. սախին (3) այլ չենդիք եւ ղուանջուտա (4) չ'ենիք, թող պարաթ մուճիպինճայ (5) չորասկան ստակ տուն գլուխ տան մեզ ի յօգնութիւն մեզ, եւ ամենայն փափազ իւրեանց առաջնորդով թող գիւրեանց զապտ ենեն եւ յեկեղեցիին թող անարգել եւ անահ մտանեն եւ եյանեն, ոչ ոք հակառակ եւ ման չլինի։»

Եւ այս կերպով արձանագրութիւն կը ձգուի և դատը կը վերջանայ։

Արձանագրութեան պատճէնը Դարանաղցի կը ստանայ քանի մը օր յետոյ (Դարանաղչ, էջ 134–135)։

1608ին կատարուած այս դիմումին, ինչպէս կը տեսնուի, կը գործակցի Գրիգոր Կեսարացին, որ սակայն քիչ յետոյ դարձեալ աշխարհական վէճերներու կողմը կ'անցնի և կը սկսի հալածել նորեկ քահանաները, այնպէս որ ոմանք իր ձեռքէն ազատելու համար խլամանալ կը փորձուին (Դարանաղչ, էջ 135–137)։

Դարանաղցին գրաւոր դիմում կ'ընէ, սակայն Կեսարացին պատասխան անգամ չի տար։ Ընդհակառակն զայն դատաստանի կը քաշէ Տէֆթէրտարին առջև։ Դարանաղցին կ'ուզէ զայն մեղմացնել. Կեսարացին աւելի կը զոռոզանայ և կը նախատէ զինքը, և վերջապէս կը մտնեն դատարան, ուր Դարանաղցին կը բացատրէ Կեսարացիին և իր մարդոց գործագրած կեղեքումները։

Սակայն Գրիգոր Կեսարացիի կուսակիցները կը շահին Տէֆթէրտարին սիրտը (Դարանաղչ, էջ 139–140) որ գործը կը յղէ Նայիպին, որ իրաւունք կու տայ Դարանաղցիին մարդոց և կը յանդիմանէ Կեսարացին, որուն կուսակիցները կ'երթան կը բողոքեն դարձեալ Տէֆթէրտարին, որ ձերբակալել կը փորձէ Դարանաղցին։

Նայիպը կը պաշտպանէ սակայն նոր եկեղեցիներու այս պետը։

Այս հակառակութեանց վերջ տալու համար, ոմանք կը խորհին երկու ոսոխները կրկին հաշտեցնել և Դարանաղցին պատուաւոր եղանակով մը Կ. Պոլսէն հեռացնել։ Եւ կը յաջողին Դարանաղցին Առաջնորդ ղրկել Ռոտոսթոյ, 1608 Յուլիս 18ին վախճանած տեղւոյն անդրանիկ առաջնորդ Ուլնեցի Յակոբ վարդապետին տեղ։ Հաշտութեան միջնորդները կը հաճեցնեն Դարանաղցին ստանձնել Ռոտոսթոյի առաջնորդութիւնը «իւր թողոի հայրդոյն», տարուէ տարի որոշեալ տուրք մը, այսինքն է «հազար ստակ» վճարելու պայմանով։ Կը տանին զինքը Զինիլի Համամի Ս. Սարգիս եկեղեցին՝ պատրիարքին քով և հոն երկուքը սիրով կ'ողջունեն զիրար եւ պաշտօնին հաստատութեան գիրը կը յանձնուի Դարանաղցիին, որ Դիոնեսիոսի Մեկնութիւն մը նուիրելով Կեսարացիին՝

(1) *Մուլք = ստացուածք, սեփականութիւն։*
(2) *Իգրապ եւ ճաֆա ընել = բռնանալ եւ նեղել։*
(3) *Զզոյշ։*
(4) *Նեղել, կեղեքել։*
(5) *Ըստ տրամադրութեան պէրաթին։*

սիրով կը բաժնուի անկէ և քանի մը օրէն կը մեկնի Ռոտոսթոյ (1609)։

Սակայն Դարանաղցին հեռացնելով չի կրնար Գրիգոր վրդ. Կեսարացին անվրդով մնալ իր աթոռին վրայ, վասնզի քիչ յետոյ Յովհաննէս Խուլ կը գրաւէ պատրիարքական աթոռը, հաւանօրէն Կ. Պոլսեցի վէճիլները իր կողմը շահելով։

Գրիգոր վրդ. Կեսարացի «նստեալ ժամանակս ինչ» պատրիարք, ըստ Յակոբ քահանայի, «ՌՄԸ (= 1609) թուին» կը թողու իբր թէ իր պաշտօնը, մինչ իրականին մէջ կը տիպուի թողուլ զայն։

Մինչև այդ թուականը պատրիարքական աթոռին վրայ ըլլալը կը հաստատուի Աւետարանի մը յիշատակարանէն, ուր ըսուած է. «Գրեցաւ Ս. Աւետարանս թվին ՌՄԸ (= 1609) ի մայրաքաղաքն Ըստամպոլ ի դուռն Կոմրուկու Սբ. Նիկողայոսի, առաջնորդութեանն Կեսարացի Գրիգոր քահանայի, թագաւորութեան Սուլթան Ահմէտին, ձեռամբ անարժան Թոխատցի Միխայէլին (*) ի վայելումն Խակաղցի Տ. Միխայէլին։...» (Բիւզանդիոն, թիւ 2946)։

Հ. Ներսէս վրդ. Ակինեան (ՀԱ. 1933, էջ 167) անոր պաշտօնավարութիւնը կ'երկարաձգէ մինչև 1610ի գարունը, սակայն ասոր համար չատ զօրաւոր պատճառ մը չեմ գտներ։ Ընդհակառակը, ինչպէս կը տեսնուի, իր եղբօրորդին արդէն իր հրաժարումը և մեկնումը Կ. Պոլիսէն 1609ին կը նշանակէ։ Իսկ Յովհաննէս Խուլի 1610ին պատրիարք դարձած ըլլալը անժխտելի է (Յոյսոյ Վէնեթիկ Զեռագրաց, էջ 685)։

Ը.

ԿԵՍԱՐԱՑԻԻ ԱՑՑԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՆԱՊԱՏՆԵՐԸ, ՍԻՆԱ, ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՒ ԱՄԻԹ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՐՏՔԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՐ ՋԱՆՔԵՐԸ

(1609—1611)

Գրիգոր Կեսարացի 1609ին կամովին կամ ակամայ իր պատրիարքական պաշտօնը ձգելէն յետոյ այս անգամ Կեսարիա չի դառնար այլ «ի ՌՄԸ (= 1609) թուին, նաւեալ ի Բիւզանդիայէ յԵգիպտոս, եղեալ ի յեռուն Սինա, ընդ իւր ունելով զՄովսէս վրդն., տուեալ նմա զաւազան, որ եւ յետոյ եղեալ կաթողիկոս ի Սբ. Էջմիածին եւ կատարեալ զոխտս իւրեանց, յաստուածախօս յեռնեն դարձան անտի Հաւիթ» (Յոյսոյ վեր. Կեսարացի)։

Այս ուղեգնացութիւնը որ իր ժամանակի վերածննդեան աշխատութեան գլխաւոր բոլոր գործիչները, Մեծ-Անապատի հիմնադիրները Սարգիս եպ. և Կիրակոս քհ., Գրիգոր վրդ. Դարանաղցի, կաթպետ վրդ. Քօթ և ուրիշ շատեր կատարած են, Կեսարացի և Տաթեւացի, երկու վերանորոգութեան շարժման մեծ գործիչներն ալ ըրած են, պարզապէս ուսումնասիրելու համար Եգիպտոսի, Սկիտէի անապատականներու կեանքը։ Անոնք կը կարծէին թէ այս ճգնողական կենցաղին մէջ մտաւոր լուսաւորութեան սերմերը պիտի կարենային ձեռք բերել, վանական կեանքը և կազմակերպութիւն ստեղծելով, Եգիպտոսի և Երուսաղէմի օտար վանքերու նըմանողութեամբը։

Այս պատճառով է որ այդ ուսումնասէր և վերանորոգիչ եկեղեցականները կը փութային Եգիպտոս և Երուսաղէմ։

Գր. Կեսարացի և իր անդրանիկ աշակերտը Մովսէս Տաթեւացի, ահա թէ ի՛նչ քանէ մղուած այս ուղեւորութեան ձեռնարկած ըլլալ կը թուին(*)։

Գր. Կեսարացի այս ուսումնասիրական ուղեւորութիւնը կատարելէ յետոյ իր աշակերտը կը թողու Երուսաղէմ, և ինքն Ամիթեցիներուն տուած խստումը և իր վարդապետին դերեզմանին ալ այցելութիւն մը տալու իր մտադրութիւնը կատարելու համար կը մեկնի դէպի Տիարպէքիր։

Հաւանօրէն Երուսաղէմ այս այցելութեան ատենն է որ Ս. Յակոբեանց վանքին նուիրած է Տաթեւացիի Գէր. Հաբշոնց մը և գաւազան մը, ինչպէս կը տեսնուի այդ անթուական մատեանին յիշատակարանին մէջ ուր կը կարդացուի սա տողերը. «յիշատակ է Հարցմանց Գիրքս եւ մեկ գաւազան այդ ի հետն, Կեսարացի Գրիգոր վար-

(*) Ծանօթ գրիչ մը՝ որ ուրիշ ձեռագիրներ ալ ընդօրինակած է Կ. Պոլիս նոյն թուականներուն։

(*) Մովսէս Տաթեւացի այս առթիւ երուսաղէմի մէջ կը սորվի մեղրամոմը ճերմկցնելու սրհեստը, վասնզի վանական-ճգնողական կեանքի մէջ պայման էր նաեւ աշխատութիւնը ապրուստ ապահովելու համար։

դպրեցին ի սուրբ Երուսաղէմ ի դուռն սուրբ Յակոբայ» (ՀԱ. 1925 էջ 570)։

Գրիգոր Կնսարացի, հաւանական է որ Հալէպի և Ուրֆայի ճամբով գացած ըլլայ Ամիթ, և այս առթիւ թերևս Հալէպի մէջ Յովհաննէս Դ. Այնթապցի կաթողիկոսին հետ ալ տեսնուած է և անոր՝ իր Երուսաղէմի մէջ տեսածները բացատրած էր և Երուսաղէմի կացութեան դարման տանելու համար թելադրութիւններ ըրած ըլլայ։

Նոյն իսկ կը յանդգնիմ ենթադրել թէ գինքը եպիսկոպոս ձեռնադրող այդ կաթողիկոսին հրահանգով գացած է Ամիթ։

Արդարև Երուսաղէմի կացութիւնը չափազանց տագնապալի էր այդ օրերուն և Յովհաննէս Այնթապցի կաթողիկոս, որուն վիճակն էր Երուսաղէմ այն ատեն, չէր կրնար անտարբեր մնալ։

Դաւիթ Արզար պատրիարքի պաշտօնավարութեան շրջանին (1571–1613), մասնաւորապէս 1590 էն յետոյ Անատոլուն յուզող ձէլալիներու ապստամբութեան պատճառով, դէպի Երուսաղէմ ուխտաւորութիւնը դադրած էր։

1601ին արդէն պարտք մը գոյացեր էր այս պատճառով և ինչպէս յիշուեցաւ Ազարիա կաթողիկոս Ջուղայեցիի ատեն ժողովարարութիւն մը կատարելով այդ պարտքը մասամբ վճարած էին։

Սակայն երկրին քաղաքական կացութիւնը այդ թուականէն յետոյ չատ աւելի տագնապալի դարձած էր, տագնապի մատնելով նաև Երուսաղէմի վանքը, քանի որ անիշխանութենէն օգտուելով հոն ալ կեղեքումներ կը կատարուէին։ Այնպէս որ մինչև 1610 թուականը 40,000 ղրուշ պարտք գոյացած էր (Սէմոն Դպիր Լեհացի. ՀԱ. 1934 էջ 554)։

«Այդ ճար ու հնար չի մնաց. ինչ անօրէն կայր, ոսկեղեն, արծաթեղեն, թէ խաչ, սկի, բուռվան, գիրք, եւ չուրջառ եւայլն ամենայն գրաւեցան յանօրինաց, զի մեծ շահ կ'առնուին, ասիսն Ժ. ԺԴ. Ժե. եւ Պարոնտէր Դաւիթն կախուղերեւ մնաց եւ ամայոց»։ (ՀԱ. 1934 էջ 554)։

Սիմոն դպիր Լեհացի, որ 1615ին Երուսաղէմ գացած է, Գրիգոր Պարոնտէր պատրիարքէն լսելով կը նկարագրէր այդ օրերուն Երուսաղէմի վանքին ողբալի վիճակը գրելով՝ թէ «վիճակն Հայոց գերեալ եւ աւերեալ բազում ժամանակս եւ ամենայն ուխտաւորք եւ եկեղեցիք տերունականաց ամայի եղեալ, . . . ի գրաւի։ Այլ եւ այս եղեւ յանհոգութենէ եւ բուղութեանց առաջնորդաց առաջնոց։ Եւ թէ հարկ ինքեր պատարագ անել, ոչ գոյր արկի, խաչ, աւետարան. երգային, կաշառ տային, բերին շուրջառ եւ այլ ինչ եւ մատուցանէին պատարագ, եւ դարձեալ տանէին փուրով։ Եւ այնչափ աւելցաւ եւ շատացաւ պարտքն, մինչ զի արքութեան տեղիսն եւս յափշտակեցին ի ձեռաց Հայոց, զի ոչ մնաց եւ ոչինչ։ Վայ ինձ, վասն իմ ծուլացեալ մեղացս մատնեցան արքութիւնք եւ Քրիստոսի տերունականաց տեղիքն ի ձեռս այլազգաց, որպէս ի հնումն Տայանական։ Այլ եւ ինքն Պարոնտէրն ասաց շատով, թէ ժամանակ մի ըստ սովորութեան Մենդեան օրն գնացաք ի Բեթղեհեմ եւ չունէաք խաչ՝ չուր օրհնէ. հանեալ մատչոցին փորիկ խաչն եւ այնով օրհնեցաք. եւ ի ժամ յուսոյ թիսան չերեւէր հայ ի սուրբ Յարութիւնն վասն անօրդ եւ նախատանաց, զի ոչ տեղիք ունէաք եւ ոչ անօրդ եւ ոչ զգեստ։ Զայս ամենայն կրեալ ազգս Հայոց շուարեալ, տարակոյս եղեալ նկուն դարձաւ եւ եղեւ ծաղր եւ նախատ եւ այսն ի մէջ ամենայն հրեշտանիից, եւ ոչ ոք կարաց օգնել կամ թաթել զուրբ Երուսաղէմ ի պարտուց, ո՛չ կաթողիկոս, ո՛չ եպիսկոպոս, ո՛չ վարդապետ, ո՛չ խօնարհ, ո՛չ մեծամեծք, ո՛չ փարթամք, մինչեւ ողորմածն Աստուած ինքն զթացեալ ողորմեցաւ եւ ոչ խապան անեսն արար եւ ոչ ցանկ բարկացաւ. այլ եսեւս, այլ արար եւ դարմանն ես, օգնական եւ փրկիչ եղեւ յուսացեալոց իւրոց, բանալով զաւազ եւ զարտնութիւն եւ զնախատինս մեր. ենկն ի խնդիր մոլորեալոց եւ կորուսեալոցս։»

Դարանաղցի, որ 1606–1607ին Երուսաղէմ գտնուած է և եղած է ականատես այս վիճակին, ինքն ալ կը հաստատէ ձէլալիներու խռովութիւններուն պատճառով «յամենայն կողմանց փակեալ էր դուռն մտից ընչից», վասնզի «ոչ ոք իշխեր վասն անի աւերչացն եւ ապանողացն բան զհպապ այլ ուրեք երթալ եւ ողորմութիւն խնդրել յումեքէ, ... եւ զանձնական ոչ ուրեք եղեալ էր եւ ոչ կայր բնաւ, եւ ուխտակամք, որ այժմոյս իրեւ զուխաջուրս կ'երթան յամենայն կողմանց ծուվով եւ ցանմով, նա՛ յայնմ ժամանակի ոչ ոք չէին գնան։ . . . . խափանեալ էին գերուսաղէմայ գնալ . . . . եւ ոչ ոք գիտեր զերու-

սաղմամ՝ թէ ո՛ւր իցէ, այլ ի ծաղ աշխարհի կարծիին, որպէս մեք ի մերում ժամանակի մանկութեանն զոր ոչ տեսաք գնացող յԵրուսաղէմ . . . : Եւ յԵրուսաղէմ կայր ի տգնապի ի մէջ անհուն եւ անվճար պարտուցն։» (Թանակերդ-Բիւն էջ 322–324)։

Այս դժբախտ օրերուն Դարանաղցիէն յետոյ 1608ին հոն գացած էր Բարսեղ վրդ. Բաղէշցի և հոն մնացեր էր մէկ տարի։ Ան «խիստ կարի առաւել հոգ տաներ պարտուցն վճարման եւ ցաւեր եւ տգնապեր հանապազ» վանքի «տեսեր զանեւնայն տառապանք վանացն ի պարտուցն կրկնեանն» (նոյն էջ 324)։

Այս վարդապետը «եղեալ զնաց մեծաւ հոգութեամբ ի յաշխարհ իւր ի Բաղէշ, ի Վան եւ յՄասան զաւառին, ... եւ . . . միաբանեալ ի հես հեզանոցի Մարտիրոս վարդապետի մեծի, որ մանանուն Արահու ասէին, որ էր ի նոյն երկրին Վանայ եւ էր առաջնորդ մեծ եւ հոյչապատար տուրք ուխտին Վարագայ, եւ վարդապետին միաբանեալ ընդ Մարտիրոսին, որ եւ նա բարեկամ էր Ս. Երուսաղէմայ եւ ցաւալից էր յոյժ։ Երկոքին միախոհ լինելով պաղատէին առ Տէր օգնել նոցա եւ զուր արկանել ի սիրտ քրիստոնէիցն Հայոց։ Եւ Մարտիրոսն անտի եւ Բարսեղն ասէր քարոզիր եւ դարձիր ի վերայ Ս. Երուսաղէմայ կողոքոգին պաղատանօք, շարով եւ մեծաւ ոդբով ծանուցին զյանգնայ թշուառութիւնն յԵրուսաղէմայ տուրք եւ առաքեալաշէն Ս. Սրբոցոյն Ս. Յակոբայ վանացն մեր եւ այլ գերահռչակ ս. տեղիանական տեղաց մասին մերոյ, որ հոռոմն եւ փռանկն կու ապատեն առնուլ եւ ինքեանց գրաւել վասն կարի եւ առաւել վերջին աղքատութեան եւ տրկարութեանն։ Եւ այսպիսի մեծակական ոդբով կակղացուցին, շնորհօքն Քրիստոսի ի հատանուրիւն ածին, որ կարապետ անուն իսօնայ մի հօրն բեռն ստակ էր տուել եւ այլք՝ երկու եւ այլք՝ մի մի բեռ եւ այլքն՝ ըստ կարեաց» (Դանաղցի, էջ 324–5)։

Այսպէս սրտայաւ վարդապետ մը աջակցութեամբ ուրիշ կարող ու ազդեցիկ եկեղեցականի մը, Վանի և Բաղէշի շրջանակին մէջ ինքնաբերաբար Երուսաղէմի վանքին պարտուց համար հանգանակութեան ձեռնարկած էին, ապղուելով անոր տեսածներէն։

Գրիգոր Կեսարացի՝ ինքն ալ ճարպիկ և ձեռներէց եկեղեցական մը՝ անտարբեր չմնաց, երբ Երուսաղէմի դժբախտ վիճակին ինքն ալ ականատես եղաւ։ Ինքն ալ ուզեց դարման մը տանիլ։ Ահա այդ դարմանը որոնելու համար էր որ ապահովաբար անիկա գնաց Տիարպէքիր։

Ասիկա ամենէն գլխաւոր պատճառն էր իր հոն ուղևորութեան։

Յակոբ քհ. Կեսարացի կը պատմէ թէ հոն «արարեալ ժողով բազում եպիսկոպոսաց եւ վարդապետաց սակս պարտուցն Երուսաղէմայ. նաեւ Էնկի Խօճայն Ամթա եւ այլ բազում դոյզիրատուաց, վաճառականաց եւ ոսկերչաց, զրեցին առ առաջնորդս եւ առ դոյզիրատուրսն Վանայ եւ ժողովեալ բազում առաջնորդաց եւ դոյզիրատուրաց եւ եկեալ յԵրուսաղէմ ՌԺԹ (=1610) թուին, եւ էր պարտք տուրք Երուսաղէմայ ԿՌ (60,000) դրշ. որ առաջնորդ էր Դաւիթն Արդար. սատարութեամբ հզօրին Աստուծոյ վճարեալ զպարտքն ազատեալ զզգեստքն, եւ եղեալ զԳրիգոր Պարոնտէրն առաջնորդ Ս. Երուսաղեմայ ի տոյն ամին, որոց վարձատրութիւնքն ի Քրիստոսէ դիցի ի ժամ դատաստանին ամենն» (Յակոբ քհ. Կեսարացի)։

Այս տողերը՝ իրենց համառօտութեան մէջ սխալ հասկցողութիւններու տեղի տուած են։

Հ. Դր. վրդ. Գալէմքեարեան և Օրմանեան (Ազգապատմ 2318–9) այնպէս հասկցած են թէ Գրիգոր վրդ. Կեսարացին ալ Երուսաղէմ եկողներուն մէջ էր և մասնակից հոն պատահածներուն աչխատանքին և Գրիգոր Պարոնտէրի պարբերաբար ընտրուելուն (տես Կենսագրութիւններ Ա. էջ 5), մինչ այս տեսակ ըմբռնում մը միանգամայն մի քանի սխալներու տեղի կու տայ, վասնզի 1610ին որչափ կ'երևի Կեսարացի չէ գացած Երուսաղէմ և Գրիգոր Պարոնտէր, պարբերաբար չէ ընտրուած, այլ միայն «Վերակացու» կամ «Հոգաբարձու» (Ազաւնունի եպս. Մէջբանէ և Այրեցոյ, էջ 81)։

Յակոբ քհ. Կեսարացիի սեղմ բառերը տեղի տուած են այս չփոթութեան, մինչ ժամանակակից ուրիշ գրողներու տուած լուսաբանութիւններէն շատ բան կը պարզուի։

Ա. ԱԼՊՕՅԱՃԵԱՆ

(Շարունակելի) (6)